Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-976[5]-15.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-270 օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում Ֆամսվա 20-ը» բառերը փոխարինել Ֆամսվա 15-ը» բառերով,

2) 1-ին մասից հանել Ֆիսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը,» բառերը,

3) 2-րդ մասից հանել Ֆ, իսկ տարեկան վճարները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող երրորդ» բառերը.

Հոդված 2. Օրենքի 11.1-րդ հոդվածի 2-րդ մասում Ֆբնապահպանական» բառը փոխարինել Ֆլիազոր» բառով.

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասում Ֆբնապահպանական» բառը փոխարինել Ֆլիազոր» բառով.

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 21. ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԸ

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարա-

ության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից։

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
Ա	Բ	Գ
ՀՀ կառավարություն	ՀՀ վարչապետի նախագահությամբ սույն թվականի մարտի 10-ին կայացած գործարարների աջակցման խորհրդի նիստում տրված հանձնարարականի, տնտեսվարողների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվական փաստաթղթերի նվազեցման և միասնականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2010 թ. մարտի 23-ի թիվ 01/16.31/1203-10 գրություն): Նախատեսվում է, որ բարձրացված խնդրի համապարփակ կարգավորման նպատակով մինչև սույն թվականի հուլիս ամիսը աշխատանքային խումբը կուսումնասիրի և կմշակի հաշվետվությունների նվազեցման և միասնականացման իրավական ակտերի ամբողջական փաթեթ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված իրավական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը համարում եմ ոչ նպատակահարմար:	
ՀՀ կառավարություն	1. Նախագծերի փաթեթը նպատակ է հետապնդում հաշվետվությունների ներկայացման և հարկային վճարների վճարման ժամկետների միասնականացումը, որի արդյունքում ներկայացված մյուս նախագծերով «15» թիվը փոխարինվում է «20» թվով, իսկ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների	Չի ընդունվել: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան՝ վճարողների կողմից վճարների եռամսյակային

Ա	Բ	Գ
	մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ընդհակառակը նախատեսվում է «ամսվա 20-ը» բառերը փոխարինել «ամսվա 15-ը» բառերով, որն անհասկանալի է և հիմնավորման կարիք ունի:	հաշվարկ-հաշվետվությունները երկու օրինակից ներկայացվում են համապատասխան լիազոր մարմին գրանցման՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչեւ հաջորդ տարվա փետրվարի 25-ը: Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների երկրորդ օրինակները վճարողները սահմանված ժամկետներին հաջորդող հինգ օրվա ընթացքում ներկայացնում են համապատասխան հարկային մարմին: Նախագծով նախատեսվել է սահմանել հարկային մարմին հաշվետվությունների ներկայացման մեկ միասնական ժամկետ՝ հաջորդ ամսվա 20-ը (հաջորդ ամսվա 15-ը մինչև լիազոր մարմին և 5-օրյա ժամկետում՝ հարկային մարմին):
	2. Օրենքի նախագծի 1-ի և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել, քանի որ երկուսն էլ վերաբերում են միևնույն, այսինքն՝ Օրենքի 11-րդ հոդվածին:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:

Ա	Բ	Գ
	3. Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում «բառերով» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառով» բառով: 4.Օրենքի նախագծի 6-րդ հոդվածում «հաջորդող» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «տասներորդ» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է: Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում պարզ չէ, թե ինչ Հպարբերության» մասին է խոսքը գնում:	Ընդունվել է: Նախագիծը վերախմբագրվել է: